

ԲԵՐՆԱՐԴ ՇՈՈՒԻ «ՊԻԳՄԱԼԻՈՆ» ՊԻԵՍԻ ԳԼԽԱՎՈՐ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ԽՈՍՔԱՅԻՆ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԸ

Գրական կերպարների «խոսքային դիմանկարին» (speech portrayal) կամ «խոսքային բնութագրմանը» (speech characteristics) առաջին անգամ անդրադարձել է պրոֆեսոր Օ.Ս.Ախմանովան: Այսպես, «խոսքային բնութագրումը», ըստ նրա, բառերի, արտահայտությունների, դարձվածքների հատուկ ընտրությունն է՝ որպես գրական ստեղծագործության մեջ գործող կերպարների գեղարվեստական ներկայացման միջոց:¹

Խոսքային դիմանկարի միջոցով հնարավորություն է ստեղծվում սահմանել կերպարի սոցիալական կարգավիճակը, զբաղմունքը, սեռը, տարիքը և նույնիսկ հոգեվիճակը²: Հետևաբար ցանկացած գրական կերպարի խոսքային դիմանկար սոցիոլեզվաբանորեն հիմնավորված է, քանզի այն օգնում է բացահայտել, թե որ սոցիալական խավին է պատկանում այս կամ այն կերպարը:

«Պիգմալիոն» պիեսի յուրաքանչյուր կերպար ունի իր ուրույն խոսքային դիմանկարը, որը հնարավորություն է տալիս բանասերին «վերծանել» հերոսի անհատական առանձնահատկությունները, խոսելաոճը:

Այս հոդվածում փորձ կանենք վերլուծել Բերնարդ Շոուի «Պիգմալիոն» պիեսի գլխավոր հերոսներ՝ Էլիզա Դուլիթլի և պրոֆեսոր Հենրի Հիգինզի խոսքային դիմանկարները: Վերլուծությունը կիրականացվի երեք մակարդակով՝ հատույթային (segmental), վերհատույթային (suprasegmental) և վերշարահյուսական (suprasyntactic):

Էլիզա Դուլիթլի՝ իբրև ծաղկավաճառ աղջկա խոսքային դիմանկարը

Էլիզան հասարակ ծաղկավաճառ աղջիկ է: Նա խոսում է «Զոքնիի» (Cockney) բարբառով, որը հատուկ է ցածր խավի ներկայացուցիչներին: Էլիզան բավականին բարետես է, չնայած առաջին հայացքից այն նշմարելի չէ: Ահա թե ինչպես է նկարագրում նրան Շոուն պիեսի սկզբում.

She is not at all a romantic figure. She is perhaps eighteen, perhaps twenty, hardly older. She wears a little sailor hat of black straw that has long been exposed to the dust and soot of London and has seldom if ever been brushed. Her hair needs washing rather badly: its mousy color can hardly be natural... She is no doubt as clean as she can afford to be: but compared to the ladies she is very dirty. Her features are no worse than theirs: but their condition leaves something to be desired; and she needs the services of a dentist.³

¹ Օ. С. Ахманова, Словарь лингвистических терминов, Москва 1966., с. 385.

² M. V. Davidov, Y. V. Yakovleva "Types of Voices as Part of Speech Portrayals", 2001, p. 8.

³ Bernard Shaw "Pygmalion", Moscow 1959, p. 7

Էլիզայի ընդհանուր նկարագրությունից անցնելով խոսքային առանձնահատկություններին՝ բերենք հետևյալ օրինակը.

The flower girl: 'Ow, eez ye-ooa son, is e?|| Wal, fewd dan y' de-ooty bawmz a'mather should, eed now bettern to spawl a pore gel's flahrzn than ran awy athaht pyin.|| Will ye-oo py me f' them?||

Հնչյունաբանական և քերականական տեսանկյունից շեղումներով արտաբերված այս նախադասությունը գրական անգլերենում ստանում է հետևյալ տեսքը.

Oh, he's your son, is he? Well, if you'd done your duty by him as a mother should, he'd know better than spoil a poor girl's flowers, then run away without paying. Will you pay me for them?

Վերլուծելով վերը նշված նախադասությունը՝ առանձնացնենք «Քոքնիին» հատուկ հետևյալ շեղումները.

“bawmz”, “spawl” – «Քոքնիում» [ai] և [ɔi] երկբարբառները արտասանվում են [o:]

“flahrzn” – “flowers” [auə] եռաբարբառը ռնգայնացվում է, իսկ լեզուն հետ է քաշվում:

“awy”, “pyin” – «Քոքնիում» «ընդունված արտասանության» [ei] երկբարբառը փոխարինվում է [ai] երկբարբառով:

Հատույթային վերլուծության տեսանկյունից Էլիզայի խոսքին բնորոշ մյուս գծերից է կոկորդային շփական հնչյունի չհնչեցնելը, այսպես կոչված (aitch-dropping).

The flower girl: I have a right to be 'ere, same as you!||

The flower girl: 'Ere, take your blooming basket.||

Էլիզայի խոսքի բնորոշ գծերից է նաև հետևյալ եզվային ռնգային [ŋ] հնչյունի փոխարինումը լնդերային [ŋ]-ով.

The flower girl: And you wouldn't go off without payin' 'either.||

The flower girl: I want to be a jady in the flower shop, stead of sellin' at the corner of Tottenham Court Road.||

Վերը բնութագրված առանձնահատկությունները վկայում են, որ «Քոքնիի» բարբառով խոսող անձանց բնորոշ գծերից մեկն է հնչյունների անհասկանալի արտասանելը և երբեմն էլ դրանց կոլ տալը:

It's aw'xawt [ɔ:raɪt]: e's a gentleman: look at his 'pe-oots.||

Գրական անգլերենում այս նախադասությունը ստանում է հետևյալ տեսքը.

It's all right: He's a gentleman: look at his boots.

Վերհատույթային վերլուծության տեսանկյունից առանձնահատուկ է Էլիզայի ձայնի տոնը, դադարը, տեմպը, ուժգնությունը, ձայնածավալը:

Տոնի փոփոխությունը, որպես կանոն, տեղի է ունենում ներ ծայնածավալի սահմաններում, որն ընթերցողի մոտ ստեղծում է խոսքի «միապաղաղության» տպավորություն:

Ձայնի ուժգնության տեսակետից պետք է նշել, որ էլիզային հատուկ է սովորականից ավելի բարձր խոսելը.

The flower girl: I\ain't done nothing\wrong by speaking to the gentleman.||

The flower girl (rising in desperation): You ought to be stuffed with nails,|| you\ought.|| (Flinging the basket at his feet). || Take the whole blooming basket for sixpence.||

Հետաքրքիր կլինի վերլուծել նաև այն դրվագը, երբ էլիզան խուճապի է մատնվում՝ լսելով Հիգինզի կողմից՝ նրան ճիշտ խոսել սովորեցնելու համար պահանջած գումարի չափը.

Higgins: Sixty pounds.|| It's handsome.|| It's biggest offer I ever had. ||

Eliza: (rising terrifyingly) Sixty pounds.|| What are you talking about?|| I never offered sixty pounds.||

cry>

<cry

Where would I get sixty pounds? ||

Ձածր խազր ներկայացուցչներին ընդհանրապես հատուկ է սովորականից ավելի արագ տեմպը: Դիտարկենք մի քանի օրինակ, երբ էլիզային զգուշացնում են, որ ինչ-որ մեկը հետևում է նրան ու գրի առնում այն ամենը, ինչ նա ասում է, նա գոչում է.

Eliza: (Springing up terrified) I've a\right to sell flowers|| if I keep off the kerb.|| (Hysterically) I am a respectable girl,|| so help me. || I never spoke to him except to ask him to buy a flower off me. ||

Սեկ այլ օրինակ

Eliza: (Breaking through them to the gentleman crying wildly) Oh,|| sir,|| don't let him charge me.|| You dunno what it means to me.||

Եվս մեկը. էլիզան, լսելով մոր աշխատանքի անցնելու մասին, քացականչում է. Eliza: "What's that you say?||

Ընդհանրապես ցածր խափի ներկայացուցչների խոսքն աչքի է ընկնում գրեթե չլավող ձայնից մինչև չափազանց բարձր ձայնը, դանդաղ տեմպից մինչև չափազանց արագ տեմպը, և հնչերանգային կառույցների սխալ օգտագործմամբ.

The flower girl: Oh,|| I know what's right. || A lady friend of mine gets French lessons for eighteen pence an hour from a real French gentleman. || Well,|| you wouldn't have the face to ask me for teaching my own language as you would for French: so I won't give more than a shilling. || Take it|| or leave it.||

Վերհատության վերլուծության մակարդակում առանձնահատուկ ուշադրության է արժանի դադարի խնդիրը «Զոքնիով» խոսող հերոսների

խոսքում: Շատ հաճախ նրանց կողմից օգտագործվում է այսպես կոչված «անտրամաբանական» կամ «ոչ տեղին» դադարը:

The flower girl: I called him | Freddy or Charlie same as you | might yourself | if you was talking to a stranger | and wished to be pleasant.||

The flower girl (appalled). Oh, | what harm is there | in my living Lisson
sob>

Grove?|| It wasn't fit | for a pig to live in; | and I had to pay four-and-six a week... ||
<sob>

Անցնելով վերլուծության վերջարահյուսական մակարդակին՝ պետք է նշել, որ այս պարագայում ծաղկավաճառ էլիզայի խոսքային դիմանկարի տիպիկ ծայնային առանձնահատկությունը կոշտությունն է (harshness): Լեզվաբանները բնութագրում են այն որպես ծայնային սպեկտրում անկանոն, ոչ պարբերական աղմուկ: Դա պայմանավորված է ծայնալարերի չափազանց ուժգին պրկմամբ⁴:

Էլիզա Դուլիթլի՝ իբրև ընդունված արտասանությամբ խոսող տիկինոջ խոսքային դիմանկարը

Անցնելով էլիզա Դուլիթլի՝ իբրև «ընդունված արտասանությամբ խոսող» տիկինոջ խոսքային դիմանկարի վերլուծությանը՝ նշենք, որ նրա նոր կարգավիճակը փոխում է թե նրա պահելածնը, և թե խոսելաոճը: Արդեն նա այն աղմկոտ աղջիկը չէ, բացակայում են գոեհիկ բացականչությունները: Եվ այս բոլոր փոփոխություններն արտացոլվում են նաև նրա խոսքային դիմանկարում:

Հատուկային մակարդակում էլիզայի խոսքում «ընդունված արտասանությունից» շեղումներ չեն նկատվում: Ջանասիրաբար աշխատելով իր արտասանության վրա՝ նա դառնում է «ընդունված արտասանության» կրողներից մեկը: Յնչյունների հղկման հետ մեկտեղ հղկվում է նաև նրա կերպարը: Խոսքի կուլտուրան իր ամնիջական ազդեցությունն է թողնում նրա պահելածնի վրա: Շշգրիտ ու հստակ արտասանությունը ստիպում է նույնիսկ ոմանց ընդունել, որ էլիզան խոսում է ինչպես Վիկտորիա թագուհին:

Liza: I don't think I can bear much more.|| The people all stare at me.|| An old lady has just told me| that I speak exactly like Queen Victoria"...||

Վերհատուկային մակարդակում նրա խոսքը դառնում է ավելի տրամաբանական և հստակ՝ դադարի ճիշտ օգտագործմամբ: Էլիզայի խոսքն աչքի է ընկնում դանդաղ տեմպով և զերծ է ավելորդ ուժգնությունից:

Liza: (speaking with pedantic correctness of pronunciation and great beauty

of tone) How do you do, Mrs. Higgins?|| (she gasps slightly in making sure of the H in Higgins, but is quite successful) Mr. Higgins told me I might come.||

⁴ M.V. Davidov, Y.V. Yakovleva "Types of Voices as Part of Speech Portrayals", 2001, p.12

հոսելու նոր ոճն օժտում է նրան հավասարակշռությամբ և ինքնավստահությամբ.

"Eliza enters, sunny, self-possessed, and giving a staggeringly convincing exhibition of ease of manner. She carries a little workbasket, and is very much at home."

Liza: How do you do, Professor Higgins?|| Are you quite well?||

Higgins: (choking) Am I- || (He can say no more).

Liza: But of course you are: you are never ill. || So glad to see you again, Colonel Pickering. || Quite chilly this morning, isn't it?||

Վերշարահյուսական մակարդակում էլիզայի խոսքային դիմանկարում նշմարելի են հետևյալ փոփոխությունները. կոկորդային արտասանության դրսևորումներ չեն նկատվում, ծայրը հետզհետե կորցնում է իր կոպտությունը, և ստանում նոր որակ՝ "ծայնի ղողանջ", որը հատուկ է ազնվական խավի ներկայացուցիչներին: Էլիզան հասկանում է, որ նա կամա թե ականա հրաժեշտ է տվել իր անցյալ կյանքին և խոստովանում է դա նաև Փիքերինգին.

Liza: Last night when I was wandering in the streets a girl talked to me, I wanted to answer her in an old way but ||

Պրոֆեսոր Հենրի Հիգինզի խոսքային դիմանկարը

Հենրի Հիգինզը հնչյունաբանության մասնագետ է և դասավանդում է տարբեր բարբառներ: Շատ լեզվաբաններ համարում են նրան հայտնի բանասեր և հնչյունաբան Հենրի Սուիթի (1845–1912) նախատիպը: Սուիթը անգլո-սաքսոներենի և անգլերեն լեզվի պատմության ասպարեզում հեղինակություններից, ինչպես նաև գիտական հնչյունաբանության առաջամարտիկներից է համարվում:⁵ Եվ այդ պատճառով էլ պատահական չէ Հենրի Հիգինզին որպես նրա նախատիպ ներկայացնելը:

Հենրի Հիգինզը բարձր խավի ներկայացուցիչ է, նրա խոսքը բնութագրվում է իբրև «ընդունված արտասանության» հոյակապ նմուշ: Հիգինզի խոսքն աչքի է ընկնում արտասանության ճշգրտությամբ, որը պատահական չէ: Վիկտորիանական Անգլիայում ճշգրիտ արտասանությունը պարտադիր պահանջ էր ազնվականության համար: Հիգինզը շատ ինքնատիպ կերպար է, նա սիրահարված է իր մասնագիտությանը և կարողանում է տարբերակել զանազան բարբառներով խոսող մարդկանց: Նա շատ լավ ներկայացնում է ինքն իրեն հենց պիեսի սկզբում.

Gentleman: "How do you do, it, if I may ask?"||

Higgins: 'Simply phonetics, the science of speech. || That's my profession|

also

my hobby!|| You can stop an Irishman or a Yorkshireman by his brogue. || I can place

any man within six miles. || I can place him within two miles in London. || Sometimes

⁵ http://en.wikipedia.org/wiki/Henry_Sweet

within two streets.||

Հիգինզն անհանդուրժող վերաբերմունք ունի տեղական բարբառով խոսողների նկատմամբ.

Higgins: "A woman | who utters such depressing | and disgusting sounds | has no right to be anywhere, | no right to live.|| Remember | that you are a human being | with a soul | and divine gift | to articulate speech: | that your native language | is the language of Shakespeare and Milton and the Bible; | and don't sit there crooning | like a bilious pigeon". ||

Չնայած Հիգինզը բարձր խավի ներկայացուցիչ է, նա շատ կոպիտ է, գոռոզ և եսասեր, էլիզայի հետ վարվում է շատ անբաղաձաքի և նվաստացուցիչ: Նա էլիզային անվանում է "a bilious pigeon", "a squashed cabbage leaf", "a scarecrow". Հիգինզի գործը մարդկանց «ընդունված արտասանություն» սովորեցնելն է և օգնել նրանց ձերբազատվել տեղական բարբառներից:

Հատուկային մակարդակում Հիգինզի խոսքային դիմանկարը բնութագրվում է արտասանության ճշգրտությամբ, որը հատուկ է հնչյունաբանին: Նրա խոսքը կարող է ծառայել որպես «ընդունված արտասանության» հոյակապ նմուշ: Նրա խոսքը «հողաբաշխ է» և «հստակ»՝ հատուկ բարձր խավի ներկայացուցիչների խոսքին⁶:

Վերհատուկային մակարդակում Հիգինզի խոսքը բնութագրվում է լայն ծայնածավալով, ծայնի տոնի բարձրության և տեմպի վարիացիաներով, հստակ և ճշգրիտ մանրաբաժանումներով, որն ուղեկցվում է հստակ տրամաբանական դադարներով, նախադասությունների ճիշտ ռիթմայնությամբ.

Higgins: r> "Henry Higgins, | author of Higgins's Universal Alphabet.|| <r

Հիգինզը, լինելով շատ տաքարյուն, լարված պահերին արտահայտում է իր զգացմունքները ծայնի ուժգնությամբ և խոսքի արագությամբ.

Higgins: "What am I to do? || I got tea this morning | instead of coffee.|| I can't find anything.|| I don't know what appointments I've got.||

Mrs. Pearce: "Eh? I would know".||

Higgins: "Of course she would, | but damn it, she's gone". ||

Վերոնշյալ ռեպլիկները Հիգինզն արտաբերում է զայրացած վիճակում, որն իր արտացոլումն է գտնում նաև առոգաբանական չափանիշների օգտագործման մեջ. շատ արագ տեմպը, չափազանց ուժգին ծայնը և այլն: Սակայն պետք է նշել, որ Հիգինզի խոսքի արագությունն ու չափազանց ուժգին ծայնը տարբերվում է «Քոբնիով» խոսողներից: Ամբողջ ստեղծագործության մեջ հազիվ թե զգացմունքային պրոֆեսորի խոսքում կարելի է նշմարել արագ

⁶ M. V. Davidov, Y. V. Yakovleva "Types of Voices as Part of Speech Portrayals". 2001. p.29

տենպից դանդաղի, բարձր տոնից ցածրի կտրուկ անցումներ, որոնք նկատվում են էլիզայի, Ալֆրեդ Դուլիթլի և «Քոքսիով» խոսող այլ կերպարների խոսքում⁷:

Վերչարահյուսական մակարդակում Հիզինգի ծայնի որակը «ծայնի դողանքն է»՝ խոսպտության և շնչեղության աննշան գծերով: Այդ գծերը առավել ակնհայտ են դառնում, երբ նա կորցնում է իր հավասարակշռությունը:

Higgins: (thundering) huskiness> Say your alphabet. || <huskiness

Higgins (with the roar of a wounded lion) h> Stop. || Listen to this, || Pickering. || This is what we pay for as elementary education. || This unfortunate animal has been locked up for nine years in school | at our expense to teach her to speak | and read the language of Shakespeare and Milton. || And the result is Ah yee, || Bayee, || Cə yee, || Də yee. || (To Eliza) Say A \ B \ C \ D. <h ||

Այսպիսով պետք է նշել, որ խոսքային դիմանկարների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում բանասերին վերծանել յուրաքանչյուր կերպարի առանձնահատկությունները, խոսելաոճը: Կերպարի խոսքային դիմանկարը սոցիոլեզվաբանորեն հիմնավորված է, քանզի այն թույլ է տալիս տարբերակել, թե սոցիալական որ խավին է պատկանում գրական այս կամ այն կերպարը: Խոսքային դիմանկարը դառնում է այսպես կոչված ուղեցույց, որը սահմանում է կերպարի սոցիալական դիրքը, զբաղմունքը, տարիքը, սեռը, հոգեվիճակը և բազմաթիվ այլ գործոններ, այլ կերպ ասած՝ այն կերպարի բնութագրումը դարձնում է ամբողջական:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է արձանագրել, որ առոգաբանական չափանիշները ծառայում են որպես կերպարի լիարժեք բնութագրման միջոց: Իսկ անգլերենն ուսումնասիրողներին հարկավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել արտասանության և խոսքի առոգաբանական կազմակերպման նրբերանգներին, քանզի դրանք համդիսանում են կարևոր գործոններ խոսքի կուլտուրան բարձրացնելու գործում:

Գրականության ցանկ

1. Akhmanova O.S. An Outline of English Phonetics, Moscow, 1973.
2. Akhmanova O.S. The Prosody of Speech, Moscow, 1975.
3. Einis M.I. Rhythm in speech portrayal, edited by Akhmanova O.S. & Shishkina T.N. Moscow, 1975.
4. M. V. Davidov, Y. V. Yakovleva "Types of Voices as Part of Speech Portrayals", Moscow, 2001.
5. О. С. Ахманова, Словарь лингвистических терминов, Москва 1966.
6. Кулешов В.В. Введение в типизацию английской речи. Москва, 1981.
7. Жирмунский В. М. Национальные языки и социальные диалекты. Ленинград, 1936.
8. О. В. Френкель Просодическое оформление высказывания как способ социальной характеристики говорящего, Язык, сознание, коммуникация. Сб. статей. Диалог – МГУ, 2000.
9. http://en.wikipedia.org/wiki/Henry_Sweet
10. <http://www.bartleby.com/65/sw/Sweet-He.html>

⁷ О. В. Френкель Просодическое оформление высказывания как способ социальной характеристики говорящего, Язык, сознание, коммуникация. Сб. статей. Диалог – МГУ, 2000. с. 88.